# Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հայ Եկեղեցում ընդունված կարգի համաձայն, նորաօծ եպիսկոպոսը Ուխտի Պատարագ է մատուցում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև:

Հունիսի 24-ին Մայրավանքում իր անդրանիկ եպիսկոպոսական Ուխտի Պատարագը մատուցեց անցած կիրակի Մայր Տաճարում եպիսկոպոս ձեռնադրված և օծված Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն իր երախտիքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և երջանկահիշատակ նախորդ երկու Հայրապետներին, որոնց գահակալության փարիներին սկսել ու շարունակում է հոգևորականի իր ուղին՝ մշտապես առաջնորդվելով Տերունական «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» պատգամով: Նորաօծ Սրբազանն իր ողջույնը հղեց նաև բոլոր նրանց, ովքեր ուղեկից են եղել իրեն այդ ճանապարհին, ինչպես նաև ի մասնավորի երախտագիտություն հայտնեց Պատարագին ներկա Կանադահայոց թեմական խորհրդի անդամներին՝ այն վստահության համար, որ ցուցաբերել են իր անձի հանդեպ՝ կոչելով Կանադայի հայոց թեմակալ առաջնորդի բարձր պաշտոնին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*